«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Նախագծային մեթոդի կիրառումը տարրական Դասարանում:

Առարկան՝ ***դասավար***

Հետազոտող ուսուցիչ՝ ***Մերի Կարապետյան***

Ուսումնական հաստատություն՝ ***Ակունքի միջնակարգ դպրոց***

Բովանդակություն

Բովանդակություն 2
Նախաբան 3
Գլուխ 1. Նախագծային մեթոդ. ինքնարտահայտվելու հնարավորություն 4
Գլուխ 2. Նախագծային մեթոդով աշխատանք իմ փորձից 10
Եզրակացություն 16
Օգտագործված գրականության ցանկ 17

Նախաբան

Նախագծային մեթոդը կրթական մեթոդների ամբողջություն է, որոնք հնարավորություն են տալիս սովորողներին ձեռք բերել գիտելիքներ և կատրողություններ՝ կոնկրետ հանձնարարություններ պլանավորելու և ինքնուրույն իրականացնելու համար: Արդյունքը՝ տեսանելի, ներկայանալի, հրապարակված աշխատանք:

Ներկա ժամանակահատվածում աշխարհը փոխվում է գլխապտույտ արագությամբ: Հատկապես փոփոխության են ենթարկվում քաղաքական, սոցիալական և տնտեսական արժեքները: Յուրաքանչյուր ոլորտում իրականացվող փոփոխությունների շղթան ստիպում է վերացնել հին արժեքները և ստեծել նորերը: Ուսման մեջ, աշխատանքում և կենցաղում մարդն անընդհատ հայտնվում է անորոշություններով լի նորանոր իրադրությունների մեջ: Դրանց հարուցած դժվարությունների հաղթահարմանը նպաստում է «ստեղծել, ծնել և արարել» դիրքորոշումը: Այն ենթադրում է ինքնատիպ, անորոշ իրավիճակներում ստեղծագործական լուծումներ գտնելու կարողություն: Երեխաները՝ որպես ներկայի կերտողներ և ապագայի շարունակողներ միշտ էլ գտնվում են հասարակության ուշադրության կենտրոնում: Հասարակությանն անհրաժեշտ են ինքնուրույն և քննադատորեն մտածող անհատներ, որոնք ունակ են համակողմանիորեն դիտարկելու իրենց առջև ծառացած խնդիրները և ստեղծագործաբար լուծելու դրանք:

Գլուխ 1. Նախագծային մեթոդ. ինքնարտահայտվելու հնարավորություն

Տարրական դպրոցը յուրաքանչյուր հասարակության մեջ կարևոր դեր է կատարում: Նոր ժամանակներում Հայաստանի տարրական դպրոցի բովանդակային և գործառական զարգացումը համընկնում է արևմյան ժողովուրդների մանկավարժության և տարրական դպրոցի բարեփոխման հետ: Համագործակցությունը, հատկապես հայաստանյան կողմի համար ավելի քան ցանկալի է. այդ կերպ մենք հնարավորություն ենք ստանում յուրացնելու մի հզոր երկրի բարգավաճող տարրական դպրոցի փորձը, որի հիմքում ընկած է մարդու ազատ և բնականոն զարգացումը, նրա իրավունքների և ժողովրդավարական սկզբունքների որդեգրումը, ինչի զարգացումը պատմական պատճառներով արգելակվել է: Սակայն չմոռանանք, որ Հայաստանը զարգանում է պատմական բարդ իրադրության մեջ: Մեր դպրոցը պետք է վերակառուցվի և ծառայի սերնդի այս նորօրյա հրատապ խնդրի լուծմանը նախապատրաստվելուն:

Նորագույն մանկավարժագիտության ամենաշոշափելի ձեռքբերումներից մեկը ուսումնական գործունեության կազմակերպման ընթացքում ուսուցչակենտրոն սկզբունքից աշակերտակենտրոն սկզբունքին անցնելն է, ինչը բացառում է պատրաստի գիտելիքների մատուցումն ու շատ հաճախ նաև նյութի մեխանիկական սերտումը: Ի տարբերություն ուսուցչակենտրոն ուսուցման՝ աշակերտակենտրոն ուսուցման առանցքում սովորողի մտածողության ու ստեղծագործական կարողությունների զարգացումն է, որի ընթացքում աշակերտը ստանձնում է որոնողի, ուսումնասիրողի, հետազոտողի, կիրառողի, և ամենակարևորը, ստեղծողի դեր: Այս դեպքում ուսուցման արդյունավետությունը մեծապես պայմանավորվում է սովորողների՝ սուբյեկտ կարգավիճակով: Սա նշանակում է, որ ուսումնական գործունեության դաշտում կենտրոնական դերն աշակերտինն է, իր ծավալած ուսումնասիրություններում ինքն է նախաձեռնություն հանդես բերողը: Արդյունքում խթանվում են սովորողի ակտիվությունը, երևակայությունն ու հայտնագործություններ անելու ձգտումը:

Ուսուցիչը մարդու ձևավորման ու զարգացման առանցքային արժեքն է: Նրա խնդիրն է՝ դպրոցը դարձնել աշխատելու և սովորելու համար առավել հաճելի ու նպաստավոր վայր: Ուստի անհրաժեշտ է, որ ուսուցիչը գիտակցի բարեփոխումների և այդ գործընթացին իր մասնակցության կարևորությունը: Նա պետք է ստեղծի ակտիվ ուսումնառության պայմաններ, որտեղ աշակերտը հանդես գա իր անհատական նախասիրություններով և ազատ գործելու հնարավորություններով, աշակերտների մեջ արթնացնել ուսման նկատմամբ դրդապատճառներ, ինչն աշխատանքի վերջում շոշափելի արդյունքների հասնելու կարևոր նախապայմանն է: Այս ճանապարհով սովորողների ձեռք բերած գիտելիքներն անվերապահորեն հանգեցնում են նախ՝ աշակերտի մտածողական կարողությունների զարգացմանը, ապա որոնողական աշխատանքի ամփոփման միջոցով հանգեցնում են այդ ամենը բանավոր կամ գրավոր խոսքով արտահայտելու ունակության ձևավորմանը: ՀՀ նոր կրթակարգի համաձայն՝ հանրակրթական դպրոցի շրջանավարտի նկարագրում, ի թիվս այլ բնութագրական որակների, նշվում է նաև նրա՝ հետազոտական աշխատանքի կատարելու կարողությունը: Այդ կարողության ձևավորումն իրականացվում է երեք փուլով.

ա) նախնական կամ նախապատրաստական փուլում (2-6-րդ դասարաններ) առաջադրվում է ինքնուրույն աշխատանք ձեռնարկելու համար գործնական հմտությունների ձևավորման խնդիրը,

բ) զարգացման կամ փորձարարական փուլում (7-9-րդ դասարաններ) խնդիր է դրվում զարգացնելու սովորողի սեփական փորձով ինքնուրույնաբար գիտելիքներ ձեռք բերելու կարողությունները,

գ) ավարտական փուլում (10-12-րդ դասարաններ) ակնկալվում են սովորողի ինքնուրույն հետազոտական աշխատանք կատարելու դրսևորումները:

Այստեղից հետևում է, որ սովորողի՝ հետազոտական աշխատանք կատարելու ունակությունները ձևավորվում և զարգանում են աստիճանաբար:

Ըստ Ա. Ի. Սավենկովի՝ հետազոտության հանդեպ հետաքրքրությունը գենետիկորեն հատուկ է երեխային: Այն մղումն արտահայտվում է որպես աշխարհն ուսումնասիրելու պահանջմունք և երեխայի հոգեկանի գլխավոր դրսևորում: Երեխան իր

բնույթով հետազոտող է, և երեխայի մեջ հետազոտական տարրական ունակություններ դրսևորվում են դեռևս վաղ տարիքից:

Ցանկացած հետազոտություն իրականացվում է որոշակիորեն մշակված քայլաշարով, որն սկսվում է նպատակներին համապատասխան հետահայաց պլանավորումից: Ընտրելով թեման, սահմանելով կենտրոնական կամ հիմնական գաղափարը, որին հետազոտության արդյունքում պետք է հանգեն սովորողները՝ կարևորագույն հարցերից մեկը վերջնական գնահատման ձևերի որոշումն է: Այսինքն մինչ աշխատանքն սկսելը կարևոր է պատասխանել հետևյալ հարցին՝ ինչպե՞ս, ի՞նչ ձևերով ու միջոցներով ենք գնահատելու սովորողների ծավալած գործունեությունն ու դրա արդյունքները:

Աշակերտի հետազոտական գործունեության ծավալմանը մեծապես նպաստում է նախագծային մեթոդը: Նախագծային և հետազոտական գործունեության տեսակներն ունեն որոշակի նմանություններ և տարբերություններ: Մեթոդիստ Կ. Թորոսյանի բնորոշմամբ՝ «Հետազոտությունը ճշմարտության որոնումն է, իսկ նախագիծը՝ կոնկրետ որևէ պարզորոշ խնդրի լուծումը»:

ներկայացնենք իրենից ինչ է ներկայացնում նախագծային ուսուցումը:

Նախագծային մեթոդ. խնդրի (տեխնոլոգիաների) մանրամասն մշակման միջոցով դիդակտիկ նպատակին հասնելու մեթոդ, որը պետք է ավարտվի միանգամայն իրական, շոշափելի գործնական արդյունքով՝ ձևակերպված այս կամ այն ձևով (պրոֆ. Եվ Ս. Պոլատ):

Նախագծային մեթոդը մանկավարժության մեջ նորույթ չէ: Նախագծային մեթոդը ուսուցման միջոց է, որը 18-րդ դարում ներդրվել է Եվրոպայում ճարտարապետության և ճարտարագիտության դպրոցներում, երբ ավարտելուց հետո ուսանողները պետք է կիրառեն իրենց ուսման ընթացքում սովորած հմտություններն ու գիտելիքները, երբ պետք է լուծեին օրինակ, հուշարձանի նախագծման խնդիր:

Դեռևս 20-րդ դարի առաջին կեսին Ջոն Դյուիի կողմից պրագմատիկ մանկավարժության հիման վրա մշակված նախագծեր մեթոդը հատկապես կարևորվում է ժամանակակից տեղեկատվական հասարակությունում:

Նախագծահին աշխատանքը խմբային է, թե անհատական: Երկու ֆորմատներն էլ իրենց տեղն ունեն և ճիշտ կազմակերպման դեպքում արդյունքը հավասարապես լավ է ստացվում:

Նախագծային աշխատանքն ունի լավ առավելություն: Այն շատ ադապտիվ է, շատ հեշտ կարող է հարմարեցվել տվյալ ուսումնական նպատակներին և պայմաններին: Այն կարող է ունենալ տվյալ թեմայի շրջանակում տեղի ունեցող գործընթաց, որը նույնիսկ դուրս չի գալիս դասարանային պայմաններից: Սակայն ավելի արդյունավետ է, երբ նածագծային գործընթացը ավելի տարածում ունի և դուրս է գալիս դասարանային և դպրոցական սայմաններից, գնում է դեպի համայնք և իր մեջ ներգրավում է շատ ուրիշ բաղադրիչներ, միջառարկայական կապեր: Նախագծային նեթոդի և քաղաքացիական ակտիվության, քաղաքացիական ներգրավածության կապը ևս շատ ակնհայտ է: Այն լավ երևում է այն նախագծերի միջոցով, որտեղ մասնակիցները փորձում են համայնքային հիմնախնդիրների մեջ: Իրականացնելով այս կամ այն նախագիծը, ձեռք են բերում լուրջ արժեքային դիրքորոշումներ, որոնք ժամանակակից քաղաքացիների համար շատ կարևոր են:

Շատ կարևոր է նաև ուսուցչի դերը: Կապ չունի թե ուսուցիչը նախածի անմիջապես մասնակիցն է, թե դրա կազմակերպիչն, ուղղորդողը: Սովորողները իրենց ուսուցչին տեսնում են ինչ-որ չափանիշ, ուզում են հասնել և նմանվել: Այն ուսուցիչները ովքեր լավ պատկերացում ունեն իրենց գործի կարևորության մասին, հսկանում են, թե սա մի կողմից ինչ բարդ, բայց մի այլ կողմից պատասխանատու աշխատանք է: Ե՛վ ուսուցիչը, և՛ դասագրքի նյութը համարվում են միանշանակ ճշմարտություն: Ժամանակակից մանկավարժներից նախագծային ուսուցման գործընթացը լուրջ պատասխանատվություն է պահանջում: Ստեղծվում է մի իրավիճակ, որ քո իմացածը, ձեռք բերած փորձը կարողանաս կիրառել կյանքի ընթացքում: Գործընթացի նպատակն է՝ սովորել լինելու համար, այն է, թե ինչ արժեքներ ենք մենք ձևավորում մեր սովորածի և փորձի ընթացքում: Սովորողները ավելի կապված են լինում շրջապատի հանդեպ, սկսում են այլևս անտարբեր չլինել և փոխարենը՝ լինել սեփականատեր շրջապատում տեղի ունեցող երևույթների հանդեպ կրելով պատասխանատվություն:

Ուսումնական գործունեություն իրականացնող մանավարժը այս կամ այն չափով, բայց անխուսափելիորեն առնչվում է սովորողի կատարած աշխատանքի տարբեր ձևերի հետ: Հաշվի առնելով այս կամ այն խմբին հատուկ հատկանիշներն ու որակները՝ նախագծերն առանձնացնենք ըստ իրականացման ժամանակահատվածի: Դրանք հիմնականում երեքն են.

1. Երկարաժամկետ խմբային նախագծեր, որոնք ձգվում են մեկ կիսամյակից մինչև մեկ ուսումնական տարի, երբեմն՝ տարիներ:

2. Միջնաժամկետ անհատական նախագծեր՝ մեկ կիսմյակի ընթացքում իրականացվող նախագծեր են: Սա ավելի օգտակար է սովորողի համար: Այն բացահայտում է սովորողի սեփական նախասիրություններն ու հետաքրքրությունները:

3. Կարճաժամկետ նախագծերը կարող են լինել մեկօրյա, մեկշաբաթյա, մեկամսյա և այլ: Այս նախագծերով ավելի հեշտ է աշխատել, աշխատանքը շարունակական չէ և սովորողին չի ձանձրացնում: Այն որպես ուսուցման միջոց շատ ավելի հարմար է և արդյունվետ:

Նախագծային ուսուցման հիմքում ընկած են հետևյալ սկզբունքները՝

- Ձևավորել ակտիվ, ինքնուրույն և կրթական գործում ակտիվ մասնակցություն ունեցող սովորողների համայնք:
- Զարգացնել հետազոտական, ստեղծագործական, որոնողական հմտություններ:
- Ձևավորել ինքնագնահատականը
- Ձևավորել ոչ միայն գիտելիքներ, այլ նաև կիրառել իրենց պրակտիկ գործունության մեջ:
- Զարգացնել սովորողի ճանաչողական հետաքրքրությունը
- Ապահովել կյանք-կրթություն իրական կապը:

Ուսումնական նախագիծն ունի իր իրականացման փուլերը.

- Հիմնահարցի ձևակերպում
- Աշխատանքյաին խմբերի ձևավորում
- Աշխատանքի բաժանում
- Խմբերի, անհատների աշխատանք

- Հետազոտություն
- Ստացված արդյունքների ընթացիկ քննարկումներ:
- Կատարած աշխատանքների ներկայացում:

(Նախապես որոշվում է ներկայացման ձևը՝ տեսանյութ, ֆոտոշարք, հոդված և այլն)

- Սովորողների և խմբի աշխատանքների գնահատում
- գնահատումը կատարվում է և՛ դասավանդողի, և՛ սովորողների կողմից:
- գնահատվում է յուրաքանչյուր սովորող:
- գնահատվում է ամբողջ խումբը:
- Հետագա աշխատանքի ուղիների նախանշում:

Նախագծային գործունեությունը կազմակերպելիս հաշվի են առնվում սովորողների տարիքային առանձնահատկությունները, հետաքրքրությունները, պատրաստվածությունը, ՏՀՏ հմտությունները, լեզվի իմացության աստիճանը:

Գլուխ 2. Նախագծային մեթոդով աշխատանք իմ փորձից

Ստորև կներկայացնենք 1-ին, 2-րդ, 3-րդ դասարաններում կիրառված նախագծային աշխատանքի փորձը, որը պսակվել է հաջողությամբ և տրվել ակնկալվող արդյունքներ:

Առաջին դասարանում Ա տառի շնորհանդեսի ժամանակ երեխաներին բաժանել տարբեր տառեր: Յուրաքանչյուր աշակերտ տրված հնչյուր-տառը ուսումնասիրչելիս ներկայացնելու է նոր նյութի մատուցումը: Այսինքն դասընկերներին կներկայացնի տրված հնչյուն-տառով սկսվող բառերի նկարներ, խաղալիքներ, տարբեր իրեր, քարտեր, պաստառներ, գծապատկերներ, ինչպես նաև կառաջարկի հանելուկներ, կերգի երգեր, կարտասանի բանաստեղծություններ: Այս ամենը երեխան կարող է կատարել ծնողի, ուսուցչի, քրոջ, եղբոր, ինչպես նաև ընկերոջ օգնությամբ: Աշակերտը, որին ստանձնած է կատարել այս աշխատանքը, մեծ բավականություն է ստանում իր կատարածով, անհամբեր սպասում է իր ներկայացմանը, իսկ դասընկերները հետաքրքրվում են յուրաքանչյուրի աշխատանքով:

Այս մեթոդի նպատակն է. աշակերտն ինքը կարողանա տրված տառ-հնչյուրնը պարունակող բառը հստակ ընթերցել, տառի տեղը բառի մեջ որոշելու կարողություններ ձևավորել, կարդաածը հասկանալով վերարտադրել, սովորել տրված տառը գրելու եղանակը և մյուս տառերի հետ կապակցելու ձևերը: Աշակերտների մեջ ձևավորվում և զարգանում է աշխատասիրություն, ընկերասիրություն, փոխօգնություն, համագործակցային կարողություններ, ծանոթանում ինքնակառավարման գաղափարին, զարգացնում երևակայական, տարածական, տրամաբանական մտածողությունը:

Երկրորդ դասարանում «Ժողովուրդն իմաստուն է» թեմայի մուտիք ժամանակ աշակերտներին բաժանել 4 խմբի: Յուրաքանչյուր խմբին հանձնարարել ժողովրդական բանահյուսության տեսակ: Թեմատիկ

խումբը ավարտելիս պետք է յուրաքանչյուր խումբ ներկայացնի իրեն տրված ժողովորդական բանահյուսության տեսակը:

Առաջին խումբ՝ Հեքիաթներ

Երկորդ խումբ՝ Խաղիկ-տաղիկներ, հանելուկներ

Երրորդ խումբ՝ Առած-ասացվածքներ

Չորրորդ խումբ՝ Շուտասելուկներ, սուտասելուկներ:

Անհրաժեշտ է հիմնավորել, թե ինչ նպտակով է ստեղծվել ժողովրդական բանավոր ստեղծագործությունը, ինչպես և ում շնորհիվ է այն հասել մինչև մեր օրերը: Այս ստեղծագործությունները պետք է կարողանան ներկայացնել պատմելով, դերային խաղով, նկարներով, քարտերով, խաչբառնելրով:

Այս աշխատանքի նպատակն է մասնակցել հետազոտական աշխատանքին, աշխատելով համապատասխան խմբում՝ տարբեր աղբյուրներից նյութեր ընտրել և ներիկայացնել:

Հետազոտական նախագծի շնորհանդեսը կազմակերպել թեմայի ամփոփման դասին: Յուրաքանչյուր խումբ կներկայացնի իր աշխատանքը: Մյուս խմբերը՝ որպես ակտիվ ունկնդիրներ, զուգահեռ նշումներ կկատարեն ձևաթերթում և վերջում կարտահայտեն իրենց կարծիքը ներկայացված աշխատանքի վերաբերյալ:

Գրառումների ձևաթերթը կարելի նախապես մշակել աշակերտների հետ: Ձևաթերթի կիրառումը հնարավորություն է տալիս երեխաների մեջ զարգացնելու ակտիվ ունկնդրի որակներ. նրանք սովորում են ուշադիր լսել խոսողին, հետևել նրա մտքի ընթացքին, լսելուն զուգահեռ գրառումներ կատարել, արտահայտել սեփական մտքեր: Բերենք ձևաթղթի մի օրինակ:

Ներկայացնող խումբ	Հեքիաթներ
Թեմա	Ինչ է հեքիաթը:
Կարևոր մտքեր	Հեքիաթները ժողովրդական բանահյուսության տեսակ է: Հեքիաթ կարդալ սիրումեն և՛ փոքրերը, և՛ մեծերը: Հեքիաթներում միշտ բարին հաղթում է չարին: Հեքիաթները լինում են կենդանական, իրապատում, հրաշապատում:
Կարծիք	Ներկայացումը հետաքրքիր էր և օգտակար:
Լրացնողների անուն-ազգանուն	Գրել անուն-ազգանուններ

Ներկայացնենք նախագծային մեթոդով 3-րդ դասարանում կատարած աշխատանքը: Այն կազմակերպել եմ

«Հայրենի՛ք, ես մի զարկն եմ քո բազկի» թեմայի մուտքի դասաժամին: Քանի որ մեզանից յուրաքանչյուրն իր դերն ունի հայրենիքի կառուցման, պահպանման ու հզորացման գործում, կարևոր է պարզել՝ ով ինչպես է պատկերացնում իր դերը որպես հայ, որպես Հայաստանի քաղաքացի, որպես մարդ:

Թեմատիկ խմբի ուսումնասիրման ավարտին յուրքանչյուրը ներկայացնելու է աշխատանք՝ ի մի բերելով ողջ թեմայի ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները: Ներկայացվող աշխատանքի տեսակը ընտրեցին աշակերտները:

Քննարկեցին հետևյալ հարցերը՝

ա. Ի՞նչ աշխատանքներ կարող են ներկայացնել,

բ. Ի՞նչ հիմնական պահանջների դրանք պետք է բավարարեն:

գ. Վերջում ինչպե՞ս պետք է գնահատվեն:

Ընտրվեցին աշխատանքի հետևյալ տեսակները.

- Գիրք
- Պաստառ
- Խաչբառ
- Ռեֆերատ

Աշխատանքներին ներկայացվող ընդհանրական պահանջներ՝

- նվիրված լինի Հայաստանին, հայերին ու նրանց հետ կապված հարցերին,
- պարունակի որոշակի տեքստ (տեղեկատվություն),
- լինի նկարազարդ (ձեռքի աշխատանքներ, լուսանկարներ և այլն)
- ստեղծված լինի՝ առնվազն երկու աղբյուրից օգտվելով,
- պարունակի հղումներ օգտագործված աղբյուրներին

Աշխատանքի գնահատումը իրականացնել սանդղակաշարի (ռուբրիկի) միջոցով: Այն տրամադրել, որպեսզի խմբում քննարկեն (յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա՝ ինչպես է վերջում գնահատվելու իր աշխատանքը): Կարող ենք կիրառել հետևյալ սնադղակաշարը:

	Զարգացող	Բավարար	Լավ	Գերազանց
Բովանդակություն	Անգամ ուսուցչի ուղղորդմամբ դժվարացել է ընտրել և մկաշել նյութը	Նյութը ընտրել և մշակել է ուսուցչի օգնությամբ, փորձել է համագործակցել խմբի անդամների հետ	Բովանդակության ընտրության, ընդհանրացման և խմբագրման աշխատանքները կատարել է ուսուցչի կամ ընկերների մասնակի օգնությամբ: Համագործակցել է խմբի անդամների հետ	Բովանդակության ընտրության, ընդհանրացման և խմբագրման աշխատանքները կատարել է վերլուծական մոտեցմամբ: Բովանդակության մեջ հստակ երևում են բարձրացրած խնդիրը և լուծման ուղիները

Մայրենիի I դասին 7-10 րոպե տրամադրել անդրադարձ կատարելով նախագծային աշխատանքին:

Խմբերը աշխատում են միասին և ուսուցչի օգնությամբ՝

- որոշում են այն թեման, որ ներկայացնելու են

- ստեղծում են իրենց աշխատանքի քայլաշարը (օրինակ՝ հետազոտության հարցերի ձևակերպում, աշխատանքի բաժինների որոշում, աղբյուրների ուսումնասիրում, հանդիպումների կազմակերպում և այլն),
- կազմում են ժամանակացույց:

Այնուհետև յուրաքանչյուր մայրենիի դասին 7-10 րոպե տրամադրել անդրադարձ կատարելու նախագծային աշխատանքին: Սովորողները կարող են քննարկումներ իրականացնել թե՛ խմբում, թե՛ խմբից դուրս, անհրաժեշտության դեպքում՝ դիմել ուսուցչին: Նրանք կարող են տնից բերել գրքեր և դրանցով աշխատել դասարանում կամ տանը կատարած աշխատանքը քննարկել ընկերների, ուսուցչի հետ: Աշխատանքը հիմնական կազմով խմբերում կատարում են ըստ նախապես կազմած քայլաշարի:

Թեմատիկ խմբի վերջին երկու դասաժամերին հետևել, որ բոլոր սովորողներն ավարտեն իրենց անհատական նախագծերը, խմբերի անդամները օգնեն իրար՝ ներկայացնելու ավարտուն աշխատանքներ:

«Հայրենի՛ք, ես մի զարկն եմ քո բազկի» թեմատիկ խմբի ամփոփման ժամին կազմակերպել նախագծային աշխատանքը:

Սովորողները հերթով 3-4 րոպեի ընթացքում ներկայացնում են իրենց աշխատանքները: Յուրքանչյուր խումբ ներկայացնողի անունը գրում է ռուբրիկի համապատասխան վանդակներում՝ հիմնավորելով իրենց կարծիքները:

Բոլորը գոհ էին աշխատանքից:

Նախագծային աշխատանքները նպաստում են սովորողների գործունեության անհատական և խմբային ձևերի, համագործակցային, հետազոտական հմտությունների մշակմանը և նյութի առավել խորությամբ յուրացմանը:

Նախագծային մեթոդի կիրառումը աշակերտներից և ուսուցչից պահանջում է բավականաչափ ջանքեր, սակայն նպաստում է աշակերների մեջ համապիտանի

կարողությունների զարգացմանը, և անհրաժեշտ է այն հաճախակի կիրառել ուսումնական գործընթացում:

Ցանկացած նախագծի հիմնական նպատակն է տարբեր կարողությունների ձևավորումը, որոնք ժամանակակից մանկավարժությունում անվանում են անձնային համալիր առանձնահատկություններ: Այն է՝ գիտելիքների, հմտությունների, արժեքների փոխկապակցում, ինչպես նաև համապատասխան իրավիճակում նրանց մոբիլիզացում և կիրառելու պատրաստակամություն:

Եզրակացություն

ՈՒսումնասիրելով «Նախագծային մեթոդի կիրառումը տարրական դասարաններում» եկանք այն եզրակացության, որ նախագծային մեթոդը գիտելիքների և հմտությունների ձևաչափն է, որը կառուցվում է այս կամ այն նախագծի շուրջ: Ծրագրի շրջանակներում աշակերտները ստեղծում են տարբեր թիմեր և իրականացնում մեծածավալ, երկարաժամկետ, կարճաժամկետ նախագծեր, որոնք ուղղված են իրական, համայնքային խնդիրների լուծմանը:

Այս ձևաչափն ունի զարգացման հետևյալ հմտությունները.

- Վերլուծողական մտածողություն
- Ստեղծարարություն
- Ինքնավերլուծություն
- Պատասխանատվություն
- Համագործակցություն
- Հաղորդակցություն
- Նախաձեռնողականություն
- Ինքնակազմակերպում

Նախագծերը աշակերտներին հնարավորություն են տալիս որոշ ժամանակահատվածում համեմատականորեն ինքնուրույն աշխատանք կատարել և իրական արդյունքներ գրանցել: Այստեղ ուսուցիչը ստանձնում է մշակողի, համակարգողի, փորձագետի, խորհրդատուի դեր: Սա նշանակում է, որ նախագծային մեթոդի հիմքում ընկած է սովորողի ճանաչողական հմտությունների, սեփական գիտելիքներն ինքնուրույն ձևակերպելու, տեղեկատվական տարածքում կողմնորոշվելու, քննադատական և ստեղծագործական մտածողության ձևավորումն ու զարգացումը:

Օգտագործված գրականության ցանկ

- Վասիլովսկա Ա. Ի. Կրտսեր դպրոցի դասավանդող «Նախագծային մեթոդը կրտսեր դպրոցում»
- Մարգարիտ Սարգսյան «Կրկին ընթրեցանության նախագծերի մասին»
- Մարինա Ստուցնիցկայա «Նախագիծը՝ ուսուցման մեթոդ»
- «Նախաշավիղ» գիտամեթոդական հանդես 2009.6, 2011.3, 2013.2, 2013.7:
- Ջ. Գյուլամիրյան «Հայոց լեզվի մեթոդիկա»
- Կարինե Թորոսյան, Կարինե Չիբուխչյան, Աստղիկ Բալայան, «Ինչպես պլանավորել մայրենիի դասը» 3-րդ դասարան: